ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«____» _____ 20 թ.

No _____

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
Էլ. փոստ՝ foi@foi.am

Ի պատասխան Ձեր 07.08.2023թ. թիվ Դ/33712-2023 գրության

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Տեղեկացվում է, «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության» մասին ՀՀ օրենքի իմաստով հսկվող ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման կանոնների խախտման դեպքերը, ի թիվս այլ իրավախախտումների դեպքերի, համարվում են իրավախախտման առարկաներ, որոնց նկատմամբ կիրառվում են արգելքներ, սահմանափակումներ:

Ուստի, 2022 թվականի հունվարի 1-ից մինչ օրս հսկվող ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման կանոնների խախտումները վերաբերել են «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածին, իսկ իրավախախտման քանակ հնարավոր չէ հայտնել, քանի որ հաշվառումն իրականացվում է այն իրավախախտման առարկաների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում են արգելքներ և (կամ) սահմանափակումներ, որոնց թվում կարող են լինել նաև երկակի նշանակության հսկվող ապրանքներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԾՈՎԻՆԱՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Կատարող՝ ՄՀՎ ՈՍԿ և ՄԲՀ բաժին
Տաթևիկ Խալաթյան
Հեռ. 060 841170 /1193